ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
29.09.2020Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 12 անդամները:

Բացակայում են **Ն.Վարդանյանը, Վ.Բաբայանը, Տ.Եփրեմյանը:**

Նիստը վարում է համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանը:

Համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանի հրավերով ավագանու նիստին մասնակցում են ***համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Բ. Բալբաբյանը, Վ.Բարսամյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը և գյուղերի վարչական ղեկավարները:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Հաստատել համայնքի ավագանու թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -12 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1 ***Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:***

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Համայնքի բյուջեի եկամուտների վարչական մասի՝

ա. 7422 «Վարչական գանձումներ»-ի «Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ» հոդվածի «7346.2» թիվը փոխարինել «13146.2» թվով,

2) Համայնքի բյուջեի ծախսերի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 0221 «Քաղաքացիական պաշտպանություն» - ի՝

աա. 4216 «Տրանսպորտի վարձակալություն» սինթետիկ հաշվին հատկացնել «1000,0» հազ. դրամ,

աբ. 4239 «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» սինթետիկ հաշվի «600.0» թիվը փոխարինել «1400.0» թվով:

բ. 10-7-1 «Սոցիալական հատուկ արտոնություններ»- ի 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվի «18000.0» թիվը փոխարինել «19000.0» թվով,

գ. Չարենցավանի «Մշակույթ» ՀՈԱԿ-ի 4511 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» սինթետիկ հաշվի «70950.0» թիվը փոխարինել «73950.0» թվով:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-12 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ
Գասպարյան Անատոլի
Գասպարյան Մելիք
Գրիգորյան Հակոբ
Դավթյան Կարեն
Երիցյան Գագիկ
Խլղաթյան Արսեն
Պողոսյան Մնացական
Սահակյան Երեմ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Փանոսյան Արթուր

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ